Հաստատված է

«Արտադրության և արտահանման աջակցման Ասոցիացիա» հասարակական կազմակերպության Համագումարի որոշմամբ

« __ » _____ 2010թ.

Նախագահ՝

_____ ****** **********

Գրանցված է

«Իրավաբանական անձանց պետական ռեգիստր» գործակալության կողմից

« __ » _____ 2010թ.

գրանցման թիվ _____

ՀՀ Արդարադատության նախարարության

«Իրավաբանական անձանց պետական ռեգիստր» գործակալության պետ՝

_____ ****** **********

Կանոնադրություն

«ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ և ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՋԱԿՑՄԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» հասարակական կազմակերպություն

2010թ.

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ

1.1. «Արտադրության և արտահանման աջակցման ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետ Կազմակերպություն) իր անդամների շահերի ընդհանրության և կամավորության սկզբունքների վրա հիմնված, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող հասարակական կազմակերպություն է, որը ստեղծվել է գործարարության զարգացման, արտահանման շուկաների ուսումնասիրման, արտահանմանը միտված ձեռնարկումներում շարքային ներդրողների աջակցության, արտահանման գործընթացների խթանման, նոր բիզնես-ծրագրերի մշակման և իրագործման նպատակով:

1.2. Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ օրենսդրությանը, միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին և սույն Կանոնադրությամբ ամրագրված սկզբունքներին համապատասխան:

1.3. Կազմակերպությունը պետական գրանցման պահից ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ, ունի ինքնուրույն ֆինանսական բյուջե, հաշվեկշիռ, առանձին գույք ու միջոցներ, բանկերում սեփական հաշիվներ, կնիքներ (հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով), դրոշմներ, իր անվանմամբ տիտղոսաթերթեր, սեփական խորհրդանիշ ու սահմանված կարգով գրանցված այլ խորհրդանիշներ, այդ թվում՝ դրոշ, պատվադրոշ (վիմպել), հուշանշաններ և հասարակական պարգևներ:

1.4. Կազմակերպության գործունեությունը հիմնված է օրինականության, հրապարակայնության, ինքնակառավարման և անդամների կամավորության ու իրավահավասարության սկզբունքների վրա:

1.5. Կազմակերպությունը պահպանում է պետության և դրա մարմինների նկատմամբ իր ինքնուրույնությունը, սույն Կանոնադրության և գործող օրենսդրության շրջանակներում ունի իր կառուցվածքը, նպատակները, գործունեության ձևերն ու մեթոդները սահմանելու իրավաբանական և տնտեսական անկախություն:

1.6. Կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում իր տրամադրության տակ գտնվող ողջ ունեցվածքով, որի վրա բռնագանձում կարող է տարածվել միայն օրենսդրությամբ նախատեսված կարգով և պայմաններով:

1.7. Կազմակերպությունը, ըստ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի, կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

Կազմակերպությունն իր անունից կարող է ձեռք բերել և իրականացնել գույքային և ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, դատարաններում հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող:

1.8. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում պետության և նրա մարմինների պարտավորություններով այնպես, ինչպես և պետությունը և նրա մարմինները պատասխանատվություն չեն կրում Կազմակերպության պարտավորություններով:

1.9. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում իր անդամների պարտավորություններով, այնպես, ինչպես և Կազմակերպության անդամները պատասխանատվություն չեն կրում Կազմակերպության պարտավորություններով:

1.10. Կազմակերպությունը համագործակցում է ինչպես ՀՀ պետական և ոչ պետական մարմինների, այնպես էլ անհատ անձանց հետ:

1.11. Կազմակերպությունը կարող է ստեղծել և ունենալ միջազգային կապեր, անդամակցել միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների, կնքել համաձայնագրեր և պայմանագրեր օտարերկրյա ու միջազգային կազմակերպությունների հետ:

1.12. Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է հիմնել լրատվության միջոցներ, տեղեկատվություն տարածել իր գործունեության վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցներով:

1.13. Կազմակերպության ամբողջական պաշտոնական անվանումը հայերեն լեզվով՝ «Արտադրության և արտահանման աջակցման ասոցիացիա» հասարակական կազմակերպություն, կրճատ՝«Ասոցիացիա 3Ա»:

Կազմակերպության ամբողջական պաշտոնական անվանումը անգլերեն լեզվով՝ Non – governmental Organization “Production and Export Support Association”, կրճատ՝ “Association 3A”:

Կազմակերպության ամբողջական պաշտոնական անվանումը ռուսերեն լեզվով՝ Общественная организация “Ассоциация поддержки производства и экспорта”, կրճատ՝ “Ассоциация 3А”.

1.14.Կազմակերպության խորհրդանիշի նկարագրությունը (լոգո):

1.15. Կազմակերպության կենտրոնական գրասենյակի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Աբելյան փողոց, շենք 6/1:

Գլուխ 2. Կազմակերպության նպատակները և խնդիրները

2.1. Կազմակերպության նպատակներն են՝

2.1.1. քաղաքացիների և կազմակերպությունների ջանքերի միավորումը՝ հանուն անհատի և հասարակության տնտեսական և ֆինանսական զարգացման.

2.1.2. քաղաքացիների և կազմակերպությունների ջանքերի միավորումը գործարարության և մասնավորապես արտահանման ոլորտների զարգացման համար.

2.1.3. ազատ շուկայական հարաբերությունների և կայուն տնտեսական միջավայրի ստեղծումն ու զարգացումը.

2.1.4. քաղաքացիների և կազմակերպությունների մտավոր ու ձեռնարկատիրական ներուժի արդյունավետ իրացումը՝ աջակցություն ցուցաբերելով բիզնես-ծրագրերի ստեղծմանն ու իրագործմանը.

2.1.5. ազատ ձեռներեցության կենսակերպին միտված սոցիալական ուղղվածություն ունեցող քաղաքականության ձևավորումը և գործուն իրականացումը.

2.1.6. հասարակական կյանքի ժողովրդավարական հիմքերի զարգացումը՝ հակազդեցության մեխանիզմներ մշակելով տնտեսական մոնոպոլիաների տարաբնույթ դրսևորումներին.

2.2. Այդ նպատակներն իրագործելու համար Կազմակերպությունը լուծում է հետևյալ խնդիրները՝

2.2.1. աջակցություն օրենսդրությամբ ամրագրված բաժնետիրական կապիտալի ձեւավորման գործընթացներին.

2.2.2. աջակցություն արտաքին շուկաների ուսումնասիրության և Կազմակերպության անդամների կողմից ներկայացված բիզնես-առաջարկների և բիզնես-ծրագրերի քննարկման, մշակման և խորհրդատվություն տրամադրելու հարցում.

2.2.3. աջակցություն և միջոցառումների անցկացում Կազմակերպության անդամների կողմից ներկայացված բիզնես-առաջարկների, բիզնես-ծրագրերի կայացման և իրագործման ու գործող ձեռնարկումների զարգացման հարցում.

2.2.4. փոխհարաբերությունների ստեղծում և համագործակցության զարգացում ու ամրացում նմանատիպ ծրագրեր իրականացնող ներպետական և միջազգային կառույցների ու հիմնադրամների հետ.

2.2.5. արտահանման ոլորտում նմանատիպ դրսևորումների միջազգային փորձի ուսումնասիրում, վերլուծություն և ընդհանրացում.

2.2.6. օգնություն և օժանդակություն Կազմակերպության անդամների կողմից ներկայացված արտահանմանը միտված բիզնես-առաջարկների, ծրագրերի, բիզնես կիրառում ունեցող գիտական առաջարկների ձևավորման, զարգացման, գործարկման, ֆինանսավորման և մոնիտորինգի հետ կապված հարցերում.

2.2.7. արտահանման շուկայի զարգացման հայեցակարգերի մշակում.

2.2.8. հասարակական աջակցություն և օժանդակություն ձեռներեցության զարգացման ժամանակակից մակարդակին հասնելուն ուղղված սոցիալական ուղղվածության նորամուծական տեխնոլոգիաների և “նոու հաու”-ների մշակման ու ներդրման գործում տնտեսական և սոցիալական կայունության բնագավառներում.

2.2.9. օժանդակություն կազմակերպությունների միջև սոցիալական ու գործարարական շփումների ու փոխհարաբերությունների ներդրմանը և հաստատմանը.

2.2.10. աջակցություն երիտասարդության ներգրավմանը արտահանումը խթանող բիզնես-ծրագրերի և բիզնես կիրառում ունեցող գիտական առաջարկների մշակման և իրականացման հարցերում (այդ թվում կրթական, տեղեկատվական և այլ ծրագրերի իրացման միջոցով).

2.2.11. մասնակցություն Կազմակերպության խնդիրներից և նպատակներից բխող ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:

Գլուխ 3. Կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունները

3.1. Իր նպատակներին հասնելու և խնդիրների լուծման համար Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրության և միջազգային նորմերի պահանջներին համապատասխան՝

3.1.1. նպաստում է ազատ շուկայական հարաբերությունների վրա հիմնված տնտեսության զարգացմանը.

3.1.2. օժանդակում է մարդկանց և հասարակական կազմակերպությունների միջև ինտեգրացիոն գործընթացներին.

3.1.3. համագործակցում է Կազմակերպության նպատակների և խնդիրների իրականացմանը վերաբերող հարցերի շուրջ միջազգային կազմակերպությունների, հասարակական, պետական և այլ միավորումների, այդ թվում նաև Կազմակերպության նպատակներին համապատասխան գաղափարներ կրող ցանկացած անձի հետ՝ անկախ նրա քաղաքացիությունից.

3.1.4. անցկացնում է դիտարկումներ, համալիր ուսումնասիրություններ և վերլուծություններ արտահանման շուկաների տնտեսական, սոցիալ-քաղաքական, իրավական և այլ խնդիրների վերաբերյալ, մշակում է իր առաջարկությունները.

3.1.5 կազմակերպում և իրականացնում է տնտեսական մրցակցության դերի բարձրացմանն ուղղված միջոցառումներ.

3.1.6 կազմակերպում և անց է կացնում հանդիպումներ, սեմինարներ, դասընթացներ և բիզնես-խաղեր՝ ուղղված արտահանման շուկայի ուսումնասիրությանը և զարգացման նոր հայեցակարգերի մշակմանը.

3.1.7. կազմակերպում և իրականացնում է արտահանման ոլորտին վերաբերող հարցերի շուրջ հասարակական կարծիքի ուսումնասիրություն, սոցիալական հետազոտություններ, զանգվածային հարցումներ և գործող օրենսդրությանը համապատասխան այլ միջոցառումներ.

3.1.8. կազմակերպում և իրականացնում է ազատ ձեռներեցության և տնտեսական մրցակցության զարգացման սոցիալական, տնտեսական և իրավական ասպարեզներին վերաբերող առաջարկությունների հավաքագրում, մշակում և ներկայացում հանրությանը.

3.1.9. անցկացնում է Կազմակերպության նպատակների և խնդիրների իրականացմանը օժանդակող ազգային և միջազգային հանդիպումներ, ցուցահանդեսներ, բարեգործական համերգներ, շոուներ, մրցույթներ, աճուրդներ, լուսավորչական, մշակութային, մարզական և այլ միջոցառումներ, մեկենասային վիճակախաղեր.

3.1.10. իրականացնում է հրատարակչական, հեռուստա-ռադիոհեռարձակման, հեռահաղորդակցության, գովազդային և տեղեկատվական այլ բնույթի, մշակութային-լուսավորչական, խորհրդատվական, կրթական և գիտա-հետազոտական գործունեություն՝ գործող օրենսդրությամբ թույլատրելի շրջանակներում.

3.1.11. իրականացնում է Կազմակերպության գործունեության, նրա նպատակների և դիրքորոշումների մասին տեղեկատվության տարածում, օժանդակում է Կազմակերպության գործունեության հիմնական ուղղություններին, խնդիրներին և նպատակներին վերաբերող հարցերի վերաբերյալ հասարակական կարծիքի ձևավորմանը.

3.1.12. իրականացնում է Կազմակերպության անդամների և նրա գործընկերների՝ արտահանման և տնտեսական մրցակցության ապահովման ոլորտում իրականցվող գործունեության բազմակողմանի օժանդակություն.

3.1.13. իրականացնում է Կազմակերպության նոր անդամների ներգրավում.

3.1.14. մշակում և իրականացնում է Կազմակերպության խնդիրներին ու նպատակներին ուղղված օրենսդրությանը չհակասող գործունեության նոր տեսակներ:

3.2 Կազմակերպությունն իր ընդհանուր նպատակներին հասնելու համար համագործակցում է այլ հասարակական միավորումների և կազմակերպությունների, այդ թվում՝ օտարերկրյա կառույցների հետ՝ իր հարաբերությունները կառուցելով փոխհամագործակցության սկզբունքի հիման վրա:.

3.3 Կազմակերպությունն իրավունք ունի իրականացնել գործող օրենսդրությանը չհակասող այլ գործողություններ:

Գլուխ 4.Կազմակերպության իրավունքները և պարտականությունները

4.1. Սահմանված նպատակներին հասնելու համար Կազմակերպությունն իրավունք ունի՝

4.1.1 ազատ տարածել տեղեկատվություն իր գործունեության մասին.

4.1.2. գործող օրենսդրությանը համապատասխան՝ մասնակցել պետական մարմինների որոշումների մշակմանը՝ Կազմակերպության կողմից սահմանված նպատակների ու խնդիրների իրականացման համար.

4.1.3. առաջարկել սեփական միջնորդական և խորհրդատվական ծառայությունները կազմակերպություններին և պետական կառույցներին.

4.1.4. իրականացնել հրատարակչական գործունեություն՝ գործող օրենսդրությամբ նախատեսված կարգով.

4.1.5. ներկայացնել և պաշտպանել Կազմակերպության, նրա անդամների, կազմակերպչական կառույցների անդամների և Կազմակերպության գործընկերների իրավունքներն ու օրինական շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, դատարաններում, հասարակական միավորումներում և միջազգային կառույցներում.

4.1.6. իրականացնել կրթական և տեղեկատվա-լուսավորչական գործունեություն.

4.1.7. հանդես գալ հասարակական կյանքի տարբեր բնագավառներում ազատ ձեռներեցության զարգացմանը, պաշտպանությանն ու փոխօգնությանը վերաբերող նախաձեռնություններով.

4.1.8 ստեղծել առևտրային կազմակերպություններ կամ մասնակից դառնալ այդպիսի կազմակերպություններին.

4.1.9. հանդես գալ որպես այլ ոչ առևտրային կազմակերպությունների հիմնադիր.

4.1.10. իրականացնել միջազգային անմիջական շփումներ և կապեր, սեփական հնարավորությունների և իրավասությունների սահմաններում մասնակցել միջազգային մարդասիրական, տեխնիկական և այլ օգնությունների, բարեգործական դրամաշնորհների, նպատակային վարկերի և սուբսիդիաների ստացման և բաշխման հետ կապված գործընթացների կազմակերպմանը, համակարգմանը և իրականացմանը, նախաձեռնել Կազմակերպության կանոնադրական նպատակների ու խնդիրների իրականացմանը նպաստող այլ ներտնտեսական գործունեություն.

4.1.11. ստեղծել կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներ (բաժանմունքներ, կազմակերպություններ, ներկայացուցչություններ, և մասնաճյուղեր) այլ երկրների տարածքներում՝ միջազգային իրավունքի նորմերին և սկզբունքներին և այդ երկրների օրենսդրությանը համապատասխան.

4.1.12. ձեռք բերել և ստանալ կանոնադրական գործունեություն իրականացնելու համար նախատեսված գույք, Կազմակերպության խնդիրների ու նպատակների իրականացման համար կնքել տնտեսական, սոցիալական և քաղաքացիա-իրավական բնույթի գործարքներ.

4.1.13. հիմնել տարբեր նպատակային հիմնադրամներ (այդ թվում՝ միջազգային), իրականացնել սոցիալ–մարդասիրական հովանավորություն՝ ուղղված Կազմակերպության նպատակների ու խնդիրների իրականացմանը.

4.1.14. ընդհանուր ծավալով իրականացնել այլ գործունեություն, որը չի հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, միջազգային իրավունքի նորմերին և կանոներին, ինչպես նաև այն երկրների օրենսդրությանը, որոնց տարածքում այդ գործունեությունն իրականացվում է.

4.1.15. Կազմակերպությունը կարող է իրականացնել գործող օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ, որոնք համապատասխանում են նրա կանոնադրական նպատակներին և խնդիրներին, և չեն հակասում միջազգային նորմերին և կանոններին.

4.2 Կազմակերպության պարտավորությունները՝

4.2.1. գործել օրենսդրության, իր կանոնադրական գործունեության ոլորտին վերաբերվող միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների ու նորմերի, ինչպես նաև սույն Կանոնադրության և Կազմակերպության այլ հիմնարար փաստաթղթերի շրջանակներում.

4.2.2. օգտագործել ստացվող նյութական միջոցներն ու այլ նպատակային ռեսուրսները՝ Կազմակերպության կանոնադրական նպատակներին և խնդիրներին հասնելու համար.

4.2.3. օգտագործել նպատակային ներդրումները, նվիրատվությունները, դոտացիաները և դրամաշնորհները, ներառյալ Կազմակերպության ծրագրերի իրականացմանն ուղղված պետական նպատակային միջոցները՝ այդ ներդրումների պայմաններին համապատասխան.

4.2.4. ամեն տարի հրապարակել իր գործունեության հաշվետվությունները, իր գույքի նպատակային օգտագործման և իր գործունեությունը շարունակելու մասին տեղեկություններ տրամադրել Կազմակերպության պետական գրանցում իրականացրած մարմնին, ինչպես նաև տեղեկատվության տրամադրման պահին կենտրոնական գրասենյակի գտնվելու վայրի, նրա անվանման և Կազմակերպության ղեկավարների մասին տվյալները փոխանցել Կազմակերպության պետական գրանցում իրականացրած մարմնին՝ իրավաբանական ընդհանուր պետական գրանցամատյանում ընդգրկված տեղեկությունների ծավալով.

4.2.5. պետական գրանցման մասին որոշում ընդունած մարմնի հարցադրումների կապակցությամբ ներկայացնել Կազմակերպության (նրա մարզային բաժանմունքների և ներկայացուցչությունների) գործունեության մասին անհրաժեշտ տեղեկատվություն՝ հարկային մարմիններին իր կողմից ներկայացվող տեղեկատվության ծավալով, ինչպես նաև ապահովել Կազմակերպության գործունեությանը վերաբերող փաստաթղթերին պետական գրանցում իրականացրած մարմնի ներկայացուցիչների ծանոթացումը:

Գլուխ 5. Կազմակերպության անդամները, նրանց իրավունքները և պարտականությունները

5.1. Անդամակցությունը Կազմակերպությանը կամավոր է:

5.2. Կազմակերպության անդամներ կարող են լինել՝

5.2.1. ֆիզիկական անձինք՝ Հայաստանի Հանրապետության կամ ցանկացած երկրի քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց 18 տարին լրացել է և ովքեր ընդունում են սույն Կանոնադրությունը, իրենց գործունեությամբ նպաստում են Կազմակերպության կանոնադրական նպատակների իրագործմանը և մուծում են մուտքավճար ու անդամավճար:

5.2.2. իրավաբանական անձինք, որոնք ընդունում են Կազմակերպության գործող Կանոնադրությունը, մասնակցում են Կազմակերպության գործունեությանը և մուծում են մուտքավճար ու անդամավճար:

5.3. Կազմակերպության անդամների գրանցումն ու հաշվառումն իրականացվում է կենտրոնացված՝ Կազմակերպության Կայքէջի միջոցով՝ ըստ Կազմակերպության Գործադիր Տնօրենի սահմանած կարգի և պայմանների:

5.4. Կազմակերպության անդամ դառնալ ցանկացողը Կազմակերպության անդամ դառնալու համար մուծում է մուտքավճար, իսկ Կազմակերպության անդամ դառնալուց հետո՝ անդամավճար, որի չափերը և գանձման կարգը սահմանվում են Կազմակերպության Կանոնակարգով:

Կազմակերպության անդամների իրավունքները և պարտականությունները

5.5. Կազմակերպության բոլոր անդամներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ: Կազմակերպության հիմնադիրները Կազմակերպության պետական գրանցումից հետո ինքնաբերաբար դառնում են Կազմակերպության անդամներ:

5.6. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

5.6.1. ընտրել և ընտրվել Կազմակերպության Համագումարի պատվիրակ.

5.6.2. ընտրել և ընտրվել Կազմակերպության ընտրովի մարմինների անդամ.

5.6.3. օգտվել Կազմակերպության իրավական, ֆինանսական, տեխնիկական, տեղեկատվական և այլ աջակցությունից.

5.6.4. ստանալ տեղեկատվություն Կազմակերպության գործունեության մասին.

5.6.5. ծանոթանալ Կազմակերպության մարմինների աշխատանքի արձանագրման մասին փաստաթղթերին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները.

5.6.6. մասնակցել Կազմակերպության կողմից կազմակերպվող կամ իրականացվող միջոցառումներին.

5.6.7. ծանոթանալ այն նյութերին, որոնք անմիջականորեն առնչվում են իր շահերի հետ.

5.6.8. Կազմակերպության ղեկավար մարմինների քննարկմանը ներկայացնել Կազմակերպության գործունեության և ծրագրերի վերաբերյալ առաջարկություններ, դիտողություններ, գործնական ծրագրեր, դիմել հարցերով եւ հայտարարություններով, այդ թվում՝ հանդես գալ Կազմակերպության ղեկավար մարմինների քննդատությամբ, անձնական մասնակցություն ունենալ դրանց քննարկմանն ու իրականացմանը.

5.6.9. ազատորեն արտահայտել սեփական տեսակետը.

5.6.10. Կազմակերպության մարմինների որոշումները բողոքարկել գրավոր կարգով՝ ըստ վերադասության.

5.6.11. Կազմակերպության մարմինների, այդ թվում՝ բարձրագույն մարմնի որոշումները վիճարկել դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով.

5.6.12. կամավոր հիմունքներով և ցանկացած ժամանակ դուրս գալ Կազմակերպության անդամակցությունից:

5.7. Կազմակերպության անդամը պարտավոր է՝

5.7.1. ենթարկվել սույն Կանոնադրության պահանջներին.

5.7.2. սահմանված կարգով և չափով կատարել մուտքվճարն ու անդամավճարները

5.7.3. կատարել Կազմակերպության ընտրովի մարմինների՝ իրենց լիազորությունների շրջանակներում ընդունած որոշումները.

5.7.4. ակտիվ մասնակցել Կազմակերպության նպատակների և խնդիրների իրականացմանը.

5.7.5. իր գործունեությամբ ու վարքով բարձր պահել Կազմակերպության հեղինակությունը, առանց Կազմակերպության իրավասու մարմնի կողմից տրված լիազորագրի հանդես չգալ Կազմակերպության անունից.

5.7.6. իր գործողություններով վնաս չպատճառել Կազմակերպությանը և նրա անդամներին.

5.7.7. հաշվառման մեջ լինել և մասնակցել Կազմակերպության կամ նրա բաժանմունքներից մեկի գործունեությանը.

5.8. Կազմակերպության անդամ դառնալը, դուրս գալը և անդամակցությունը կասեցնելու ու դադարեցնելու կարգը՝

5.8.1. Ֆիզիկական անձանց անդամագրումը Կազմակերպությանն իրականացվում է Կազմակերպության Գործադիր Տնօրենի կողմից՝ ընդունվողի գրավոր դիմումի հիման վրա: Կազմակերպությունն ունի Կայքէջ, որի միջոցով էլ կատարվում է անդամների գրանցումը: Կազմակերպության համակիրը էլետրոնային փոստով դիմումաձև է լրացնում և ուղարկում Կազմակերպության Կայքէջին: Կազմակերպության անդամի ընդունելության որոշումը կայացվում է Կազմակերպության Գործադիր Տնօրենի կողմից: Կազմակերպության համակիրը, Գործադիր Տնօրենի կողմից սահմանած կարգով փոխանցելով մուտքավճարը, 3 օրվա ընթացքում գրանցվում է Կայքէջում՝ որպես Կազմակերպության անդամ:

5.8.2. Կազմակերպության անդամի իրավունքները և պարտականությունները առաջանում են (դադարեցվում են) Կանոնադրությամբ լիազորված մարմնի կողմից նրա՝ Կազմակերպության անդամ դառնալու (դուրս գալու, անդամակցությունը դադարեցնելու) որոշում ընդունելու պահից:

5.8.3. Կազմակերպության անդամի դուրս գալն իրականացվում է նրա գրավոր դիմումի հիման վրա: Կազմակերպության անդամի դուրս գալը, նրա անդամակցության կասեցումը կամ դադարեցումը իրականացվում է նույն մարմնի որոշմամբ, որի որոշմամբ տվյալ քաղաքացին դարձել է Կազմակերպության անդամ:

5.8.4. Կազմակերպության անդամակցության կասեցումը անդամակցության ժամանակավոր դադարեցումն է, ինչը կարող է կիրառվել Կազմակերպության անդամի նկատմամբ Կայքէջի Մոդերատորի կողմից, եթե նա՝

- չի վճարել ամսեկան անդամավճարը,

- Կայքէջի միջոցով մասնակցելով Կազմակերպության գործունեությանը՝ իրեն թույլ է տվել բարոյական նորմերի և էթիկայի կոպիտ խախտումներ:

5.8.5. Կազմակերպության անդամի անդամակցությունը կարող է կասեցված մնալ մեկ տարվա ընթացքում, որից հետո, եթե տվյալ անդամը որևէ քայլ չի ձեռնարկում իր անդամակցությունը վերականգնելու համար, Գործադիր Տնօրենի որոշմամբ Կայքէջի Մոդերատորը հանում է այդ անդամի տվյալները Կազմակերպության Կայքէջի անդամների բազայից և տվյալ անդամի անդամակցությունը համարվում է դադարեցված:

5.8.6. Կազմակերպության անդամակցության դադարեցման համար կարող են հիմք ծառայել՝

- Կազմակերպության Կանոնադրության պահանջները չպահպանելը,

- Կազմակերպությանը նյութական կամ բարոյական վնաս հասցնելը,

- Կազմակերպության ղեկավար մարմինների որոշումները կամ բաժանմունքի ղեկավարների որոշումները չկատարելը,

- Կանոնադրությամբ նախատեսված անդամավճարները պարբերաբար (1 տարվա ընթացքում) չմուծելը:

5.8.7. Կազմակերպության անդամի անդամակցության անհիմն կասեցումն ու դադարեցումը չի թույլատրվում և կարող է բողոքարկվել մեկամսյա ժամկետում Կազմակերպության մշտական գործող բարձրագույն մարմնում կամ Համագումարում:

5.8.8. Իրավաբանական անձանց անդամագրումը Կազմակերպությանն իրականացվում է Կազմակերպության Գործադիր Տնօրենի որոշմամբ՝ վերջիններիս գրավոր դիմումի հիման վրա: Գրավոր դիմումի հետ միասին ներկայացվում է լիազորված մարմնի որոշումը՝ Կազմակերպությանը անդամագրվելու մասին, անդամագրվող հասարակական միավորման գրանցման վկայականի պատճենը և կանոնադրությունը: Իրավունքները և պարտավորությունները առաջանում և դադարում են Կազմակերպության Գործադիր Տնօրենի կողմից՝ Կազմակերպության անդամ դառնալու (դուրս գալու, անդամակցությունը դադարեցնելու) մասին որոշում կայացնելու պահից:

5.8.9. Իրավաբանական անձ հանդիսացող Կազմակերպության անդամի դուրս գալը իրականացվում է վերջինիս լիազորված մարմնի որոշմամբ հաստատված գրավոր դիմումի հիման վրա: Իրավաբանական անձ հանդիսացող Կազմակերպության անդամի դուրս գալը կամ անդամակցության դադարեցումն իրականացվում է Կազմակերպության Գործադիր Տնօրենի որոշմամբ.

5.8.10. Կազմակերպության անդամությունից իրավաբանական անձի անդամակցության դադարեցման համար հիմք կարող է ծառայել՝

- Կազմակերպության Կանոնադրության պահանջներին չհետևելը,

- Կազմակերպությանը նյութական կամ բարոյական վնաս հասցնելը,

- Կազմակերպության ղեկավար մարմինների որոշումները չկատարելը,

- Կազմակերպության Կանոնադրությամբ նախատեսված անդամավճարները պարբերաբար (1 տարվա ընթացքում) չմուծելը,

- իրավաբանական անձի լուծարումը:

Գլուխ 6. Կազմակերպության կենտրոնական մարմինների կառուցվածքը

- Կազմակերպության բարձրագույն ղեկավար մարմինը Կազմակերպության Համագումարն է (այսուհետ՝ Համագումար):

- Կազմակերպության ընտրված բարձրագույն պաշտոնատար անձը Կազմակերպության Նախագահն է:

- Կազմակերպության մշտական գործող ղեկավար մարմինը Կազմակերպության Տնօրենների Խորհուրդն է, որը գլխավորում է Գործադիր Տնօրենը:

- Կազմակերպության ներկայացուցչական և վերահսկողական մարմինը Հասարակական Պալատն է:

- Կազմակերպության խորհրդատվական մարմինը Վերին Պալատն է:

- Կազմակերպության գլխավոր վերահսկողական մարմինը Վերահսկիչ Հանձնաժողովն է:

Կազմակերպության Համագումարը

6.1. Համագումարը Կազմակերպության բարձագույն ղեկավար մարմինն է, որին պատկանում է Կազմակերպության գործունեության հետ կապված ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը:

6.2.Կազմակերպության Համագումար գումարվում է երկու տարին մեկ անգամ՝ Կազմակերպության Նախագահի կողմից:

6.3. Արտահերթ Համագումար կարող է գումարվել Կազմակերպության Նախագահի որոշմամբ ոչ ուշ քան 14 օրացուցային օրվա ընթացքում Կազմակերպության անդամների 1/3-ի կամ Կազմակերպության Վերահսկիչ Հանձնաժողովի անդամների 1/3-ի պատճառաբանված պահանջով:

6.4. Համագումարի գումարման վայրը, ժամանակը, կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցչական նորմերը և Համագումարի օրակարգը որոշվում և հայտարարվում է ոչ ուշ, քան 14 օր առաջ՝ մինչ Համագումարի գումարման օրը: Համագումարը համարվում է իրավազոր, եթե նրան ներկա են Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների կեսից ավելին ներկայացնող ընտրված պատվիրակների կեսից ավելին: Համագումարի որոշումներն ընդունվում են ներկա պատվիրակների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց կամ փակ (գաղտնի) քվեարկությամբ:

6.5. Կազմակերպության Կանոնադրության ընդունման, նրանում փոփոխություններ և լրացումներ կատարելու, Կազմակերպության վերակազմավորման և լուծարման, ղեկավար և վերահսկող մարմինների ընտրությունների մասին որոշումներն ընդունվում են Համագումարի կողմից քվորումի առկայության պայմաններում՝ Համագումարին ներկա գտնվող պատվիրակների ձայների որակյալ մեծամասնությամբ (մասնակիցների 2/3 ձայներով): Մնացած հարցերով որոշումներն ընդունվում են Համագումարի մասնակիցների

ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկության ձևը սահմանվում է Համագումարի կողմից:

6.6. Համագումարի նիստերը արձանագրվում են: Արձանագրությունը հաստատվում է Համագումարի նախագահողի և քարտուղարի ստորագրություններով:

6.7. Համագումարի բացառիկ իրավասությունները՝

6.7.1. հաստատում է Կանոնադրությունը, փոփոխություններ և լրացումներ է կատարում Կանոնադրության մեջ.

6.7.2. սահմանում է Կազմակերպության գործունեության և զարգացման հիմնական ուղղություններն ու առաջնահերթ խնդիրները.

6.7.3. չորս տարի ժամկետով ընտրում է Կազմակերպության Նախագահին, իրավունք ունի վաղաժամկետ դադարեցնելու նրա լիազորությունները.

6.7.4. որոշում է ընդունում Կազմակերպության վերակազմավորման կամ լուծարման մասին, բացի դատարանի վճռով վերակազմավորման և լուծարման դեպքերից.

6.7.5. հաստատում է Կազմակերպության Վերահսկիչ Հանձնաժողովի գործունեության կանոնակարգը, ընտրում է Վերահսկիչ Հանձնաժողովի Նախագահին և անդամներին, իրավունք ունի վաղաժամկետ դադարեցնելու նրանց լիազարությունները.

6.7.6. սահմանում է Կազմակերպության գույքի ձեռքբերման, օգտագործման և տնօրինման սկզբունքները.

6.7.7. հաստատում է Ասոցիացիայի գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները:

6.8. Կազմակերպության Համագումարն իրավասու է քննարկել Կազմակերպության գործունեությանը վերաբերվող ցանկացած հարց և դրա վերաբերյալ ընդունել համապատասխան որոշում:

6.9. Երկու տարին մեկ անգամ Համագումարն ընդունում է Կազմակերպության Նախագահի և Վերահսկիչ Հանձնաժողովի Նախագահի հաշվետվությունները:

Կազմակերպության Նախագահը

6.10. Կազմակերպության Նախագահը հանդիսանում է Համագումարի կողմից ընտրված Կազմակերպությունը ներկայացնող անձ: Նա ընտրվում է Կազմակերպության Համագումարի կողմից երկու տարի ժամկետով:

6.11. Նախագահը գլխավորում է Կազմակերպությունը և գործում է նրա անունից առանց լիազորագրի: Կազմակերպության Նախագահն ընտրվում է Համագումարի կողմից չորս տարի ժամկետով, սակայն Համագումարն իրավունք ունի վաղաժամկետ դադարեցնել Նախագահի լիազորությունները:

6.12. Ընտրվելով Կազմակերպության Նախագահ՝ տվյալ անձն ավտոմատ կերպով դառնում է Կազմակերպության Վերին Պալատի Խոսնակ:

6.13. Կազմակերպության Նախագահի լիազորությունները՝

6.13.1. սահմանում է Կազմակերպության նպատակների և խնդիրների լուծմանն ուղղված գործառույթների իրականացման հիմնական ուղղությունները:

6.13.2. առանց լիազորագրի ներկայացնում է Կազմակերպությունը՝ պետական իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց աշխարհի ցանկացած երկրներում և միջազգային կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում.

6.13.3. գումարում է Կազմակերպության հերթական և արտահերթ Համագումարներ.

6.13.4. ստորագրում է համագումարների արձանագրությունները, պատասխանատու է կնիքի, Կանոնադրության և Կազմակերպության պետական գրանցման վկայականի պահպանման համար.

6.13.5. առաջադրում է Գործադիր Տնօրենի թեկնածությունը, ներկայացնում է նրան Հասարակական և Վերին պալատներին և նրանց կողմից հաստատելուց հետո կնքում է նրա հետ երկու տարվա պայմանագիր.

6.13.6. երաշխավորում է գործադիր ապարատի գործունեության օրինականությունը.

6.13.7. հաստատում է Կազմակերպության Գործադիր Տնօրենի Աշխատակազմի հաստիքացուցակը.

6.13.8. հաստատում է Ասոցիացիայի հիմնական միջոցառումների և աշխատանքների տարեկան պլանները, ծրագրերը (այդ թվում՝ դրամաշնորհային ծրագրերը) և հսկում դրանց կատարման ընթացքը.

6.13.9. հաստատում է Տնօրենների Խորհրդի կողմից մշակված և Հասարակական Պալատի հավանությանն արժանացած Ասոցիացիայի տարեկան բյուջեի նախագիծը, ինչպես նաև բյուջեի փոփոխությունները.

6.13.10. համակարգում է Վերին Պալատի աշխատանքները.

6.13.11. լուծում է այլ հարցեր՝ կապված Կազմակերպության գործունեության հետ, որոնք չեն վերաբերում Համագումարի բացառիկ իրավասությանը:

6.14. Տարին երկու անգամ Կազմակերպության Նախագահն ընդունում է Գործադիր Տնօրենի հաշվետվությունը:

6.15. Կազմակերպության Նախագահը հաշվետու է Ասոցիացիայի Համագումարին (երկու տարին մեկ անգամ):

Կազմակերպության Վերին Պալատը

6.16. Վերին Պալատը հանդիսանում է Կազմակերպության խորհրդատվական մարմին: Այն ձևավորվում է պետական, հասարակական և քաղաքական գործիչներից, գիտության, մշակույթի, բանակի և իրավապաշտպան կառույցների, գործարար ոլորտի ներկայացուցիչներից:

6.17. Վերին Պալատի անդամության թեկնածուն կարող է առաջադրվել Վերին Պալատի անդամներից յուրաքանչյուրի կողմից և հաստատվում է Վերին Պալատի կողմից: Վերին Պալատը անդամների ձայների մեծամասնությամբ հաստատում է տվյալ անձի թեկանածությունը և նա դառնում է Վերին Պալատի անդամ:

6.18. Վերին Պալատի Խոսնակ է դառնում Կազմակերպության Նախագահը, որն ընտրվել է Համագումարի կողմից:

6.19. Վերին Պալատի լիազորությունները՝

6.19.1. հաստատում է Նախագահի կողմից առաջադրված Գործադիր Տնօրենի թեկնածությունը.

6.19.2. իր կազմից առաջարկում է 3 անձի, որոնք երկու տարով դառնում են Տնօրեններ և մտնում են Տնօրենների Խորհրդի մեջ. անհրաժեշտության դեպքում կարող է վաղաժամկետ դադարեցնել նրանց լիազորությունները.

6.19.3. կազմակերպում է Տնօրենների Խորհրդի կողմից ներկայացված նախագծերի շուրջ քննարկումներ.

6.19.4. աջակցում է արդեն հաստատված բիզնես-պլանների իրագործմանն ու օգնում է դրանց համար ֆինանսավորման աղբյուրներ գտնելու գործում.

6.19.5. Կազմակերպության Կայքէջի միջոցով իրականացնում է խորհրդատվական գործունեություն Կազմակերպության անդամներին հետաքրքրող բիզնես ոլորտին վերաբերող հարցերի շուրջ.

6.19.6. օժանդակում է պետական կառույցների, միջազգային կազմակերպությունների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների և հաստատությունների, ինչպես նաև առանձին քաղաքացիների հետ Կազմակերպության փոխհարաբերությունների զարգացմանը.

6.19.7. ընդունում է Կանոնակարգը, հաստատում է (ձայների 50%+1 հարաբերակցությամբ) Կանոնակարգում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու՝ Տնօրենների Խորհրդի կողմից ներկայացված նախագիծը. չհաստատելու դեպքում այն ուղարկվում է լրացուցիչ մշակման.

6.19.8. իրականացնում է այլ գործառույթներ՝ կապված Կազմակերպության գործունեության հետ:

6.20. Վերին Պալատը հաշվետու է Համագումարին՝ երկու տարին մեկ անգամ:

6.21. Վերին Պալատը տարին մեկ անգամ ընդունում է Գործադիր Տնօրենի հաշվետվությունը:

Կազմակերպության Հասարակական Պալատը

6.22. Հասարակական Պալատն իրականացնում է Կազմակերպության ներկայացուցչական և վերահսկիչ մարմնի ֆունկցիաներ, մասնակցում է Կազմակերպության ծրագրերի քննարկմանը, մշակմանը և իրականացմանը:

6.23. Կազմակերպության Հասարակական Պալատը ձևավորվում է ցանկացած երկրի քաղաքացիներից և քաղաքացիություն չունեցող անձանցից, որոնք հանդիսանում են Կազմակերպության անդամ, ընդունում են Կազմակերպության Կանոնադրությունը, գործնական օժանդակություն են ցուցաբերում նրա նպատակների և խնդիրների, Տնօրենների Խորհրդի կողմից հաստատված որոշումների իրականացմանը:

6.24. Հասարակական Պալատի անդամ կարող է դառնալ Կազմակերպության այն անդամը, որը հավաքել է Կազմակերպության անդամների ձայների անհրաժեշտ քանակը: Ձայների անհրաժեշտ քանակը սահմանվում է Տնօրենների Խորհրդի կողմից: Հասարակական Պալատի անդամների ընտրությունների համար հատուկ օր և ընթացակարգ չի նախատեսվում: Ընտրություններն անց են կացվում Կազմակերպության Կայքէջի միջոցով:

6.25. Հասարակական Պալատի անդամների քանակը չի սահմանափակվում: Հասարակական Պալատի անդամներն ընտրում են իրենց կազմից Հասարակական Պալատի Խոսնակ:

6.26. Հասարակական Պալատի Խոսնակը հանդիսանում է նրա ղեկավարը, որը զբաղվում է Պալատի աշխատանքների հետ կապված կազմակերպչական խնդիրների ապահովմամբ:

6.27. Հասարակական Պալատի Խոսնակի թեկնածությունն առաջադրում է կամ ինքը, կամ Հասարակական Պալատի ցանկացած անդամ: Ընտրություններն անց են կացվում Հասարակական Պալատի Խոսնակի՝ ոչ պակաս քան 3 թեկնածուների առկայության դեպքում: Ընտրված է համարվում Հասարակական Պալատի անդամների ձայների մեծամասնությունը ստացած թեկնածուն:

6.28. Հասարակական Պալատի Խոսնակի լիազորությունները՝

6.27.1. իրականացնում է Հասարակական Պալատի գործունեության ընդհանուր ղեկավարումը.

6.27.2. զբաղվում է Պալատի աշխատանքների հետ կապված կազմակերպչական խնդիրների ապահովմամբ.

6.27.3. կազմակերպում է Հասարակական Պալատում քննարկումներ և ընտրություններ.

6.27.4. ավտոմատ կերպով դառնում է Տնօրենների Խորհրդի անդամ.

6.27.5. Գործադիր Տնօրենի բացակայության դեպքում կատարում է նրա պարտականությունները:

6.28. Հասարակական Պալատի լիազորությունները՝

6.28.1. հաստատում է Կազմակերպության Գործադիր Տնօրենի թեկնածությունը, որն առաջադրել էր Նախագահը և որին հավանություն էր տվել Վերին Պալատը.

6.28.2. իր կազմից առաջարկում է 3 անձի, որոնք երկու տարով դառնում են Տնօրեններ և մտնում են Տնօրենների Խորհրդի մեջ. անհրաժեշտության դեպքում կարող է վաղաժամկետ դադարեցնել նրանց լիազորությունները.

6.28.3. քննարկում է Տնօրենների Խորհրդի կողմից ուղարկված բիզնես-առաջարկը, այդ առաջարկի հիման վրա կազմված բիզնես-պլանը և տալիս է եզրակացություն դրանց վերաբերյալ, իրականացնում է վերահսկողություն և մոնիտորինգ ընթացքի մեջ գտնվող բիզնես-նախագծերի նկատմամբ.

6.28.4. քննարկում է Տնօրենների Խորհրդի կողմից մշակված Կազմակերպության տարեկան բյուջեի նախագիծը, անում առաջարկություններ Տնօրենների Խորհրդին՝ այն փոփոխելու վերաբերյալ.

6.28.5. որոշում է կայացնում տնտեսական ընկերություններ ստեղծելու վերաբերյալ.

6.28.6. ընդունում է Կանոնակարգը, հաստատում է (ձայների 50%+1 հարաբերակցությամբ) Կանոնակարգում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու՝ Տնօրենների Խորհրդի կողմից ներկայացված նախագիծը. չհաստատելու դեպքում այն ուղարկվում է լրացուցիչ մշակման.

6.28.7. իրականացնում է այլ գործառույթներ՝ կապված Կազմակերպության գործունեության հետ.

6.29. Հասարակական Պալատը հաշվետու է Համագումարին՝ երկու տարին մեկ անգամ:

6.30. Հասարակական Պալատը տարին մեկ անգամ ընդունում է Գործադիր Տնօրենի հաշվետվությունը:

Կազմակերպության Գործադիր Տնօրենը

6.31. Կազմակերպության Գործադիր Տնօրենը գլխավորում և ղեկավարում է Տնօրենների Խորհրդի աշխատանքները՝ հանդիսանալով նրա անդամ և նախագահող: Գործադիր Տնօրենի թեկնածությունը առաջադրում է Կազմակերպության Նախագահը, իսկ Հասարակական և Վերին պալատները 50%+1 ձայների հարաբերակցությամբ հաստատում են նրա թեկնածությունը: Պալատների կողմից հաստատվելուց հետո Նախագահը երկու տարով աշխատանքային պայմանագիր է կնքում տվյալ անձի հետ, ըստ որի նա ստանձնում է Կազմակերպության ողջ գործադիր ապարատի ղեկավարությունը: Գործադիր Տնօրենն իրականացնում է իր •ործունեությունը ելնելով սույն Կանոնադրության պահանջներից:

6.32. Կազմակերպության Գործադիր Տնօրենի լիազորությունները՝

6.32.1. հանդիսանում է Կազմակերպության Տնօրենների Խորհրդի ղեկավարը, իրականացնում է Կազմակերպության ընթացիկ ղեկավարումը.

6.32.2. կազմակերպում է Համագումարի և Կազմակերպության ղեկավար մարմինների որոշումների իրականացումն ու վերահսկողությունը.

6.32.3. իրականացնում է Կազմակերպության Նախագահի կողմից հաստատված հիմնական միջոցառումների կազմակերպումը և աշխատանքային տարեկան պլանների ու ծրագրերի իրագործումը.

6.32.4. Նախագահի հետ կնքած պայմանագրի համաձայն՝ ներկայացնում է Կազմակերպությունը պետական իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց ու կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում.

6.32.5. ունի Կազմակերպության ֆինանսա-տնտեսական փաստաթղթերի առաջին ստորագրության իրավունքը, լուծում է Կազմակերպության ֆինանսական և տնտեսական գործունեության հետ կապված հարցերը.

6.32.6. տնօրինում է Կազմակերպության գույքը և միջոցները՝ սահմանված նախահաշիվների և Կազմակերպության բյուջեի սահմաններում, նրա անունից կնքում է համաձայնագրեր և պայմանագրեր, տալիս է լիազորագրեր, բացում և փակում է բանկային հաշիվներ, հայցեր է ներկայացնում դատարան և հանդես է գալիս դատարանում.

6.32.7. որոշում է կայացնում Կազմակերպությանն անդամագրելու և անդամակցությունը դադարեցնելու վերաբերյալ.

6.32.8. որոշում է անդամավճարների և մուտքավճարների չափերը և դրանց գանձման կարգը.

6.32.9. սահմանում է Կազմակերպության անդամների հաշվառում վարելու կարգը և պայմանները.

6.32.10. գումարում է Տնօրենների Խորհրդի նիստեր և նախագահում է այդ նիստերը.

6.32.11. ստորագրում է Տնօրենների Խորհրդի նիստերի արձանագրությունները, որոշումները և այլ փաստաթղթեր.

6.32.12. սահմանում է Կազմակերպության ներսում աշխատանքային գործունեության ընթացակարգը (ներկայացնում է հաստիքացուցակ, ձևավորում է աշխատակազմ, արձակում հրամաններ) և հետևում դրա պատշաճ կատարմանը.

6.32.13. աշխատանքի է ընդունում և ազատում աշխատանքից Կազմակերպության գործադիր ապարատի հաստիքային աշխատակիցներին.

6.32.14. սահմանում է Կազմակերպության անդամների և գործադիր ապարատի հաստիքային աշխատակիցների նկատմամբ խրախուսանքի և տույժի միջոցներ կիրառելու կարգը, աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով ապարատի աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսանք, ենթարկում է կարգապահական տույժերի.

6.32.15. իր լիազորությունների շրջանակներում արձակում է կառուցվածքային ստորաբաժանումների, Կազմակերպության մարմինների և անդամների կողմից պարտադիր կատարման ենթակա հրամաններ, որոշումներ, կարգադրություններ.

6.32.16. տալիս է լիազորագրեր՝ Կազմակերպության շահերը ցանկացած երրորդ անձանց հետ հարաբերություններում ներկայացնելու իրավունքի մասին.

6.32.17. որոշումներ է ընդունում Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ՝ ներկայացուցչություններ և մասնաճյուղեր, ինչպես նաև հանձնաժողովներ, բաժիններ, ակումբներ, աշխատանքային խմբեր և այլն ստեղծելու և լուծարելու մասին, նշանակում է և ազատում է պաշտոններից դրանց ղեկավարներին, հանձնարարականներ է տալիս Տնօրենների Խորհրդին և իր աշխատակազմին՝ այդ հարցերի հետ կապված կազմակերպչական խնդիրները լուծելու նպատակով.

6.32.18. որոշումներ է ընդունում ոչ առևտրային իրավաբանական անձանց միություններ հիմնադրելու և նման միություններին, ինչպես նաև միջազգային կազմակերպություններին Կազմակերպության անդամակցելու վերաբերյալ.

6.32.19. որոշում է ընդունում օտարերկրյա պետությունների տարածքում Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների բացման, ինչպես նաև դրանց կազմավորման ձևի և իրավաբանական կարգավիճակի մասին.

6.32.20. որոշում է կայացնում լրատվական միջոցներ ստեղծելու վերաբերյալ.

6.32.21. որոշում է կայացնում հիմնադրամներ ստեղծելու վերաբերյալ.

6.32.22. լուծում է այլ հարցեր՝ կապված Կազմակերպության գործունեության հետ, որոնք չեն վերաբերում Համագումարի բացառիկ իրավասությանը:

6.33. Կազմակերպության Գործադիր Տնօրենի՝ իր լիազորությունների շրջանակներում ընդունած որոշումները պարտադիր են Կազմակերպության բոլոր անդամների և հաստիքային աշխատակիցների համար:

6.34. Գործադիր Տնօրենը իրավասու է իր լիազորությունների մի մասը հրամանով դնել Տնօրենների խորհրդի մեկ այլ անդամի վրա:

6.35. Գործադիր Տնօրենը հաշվետու է Կազմակերպության Համագումարին, Հասարակական և Վերին Պալատներին, Նախագահին և Վերահսկիչ Հանձնաժողովին:

Կազմակերպության Տնօրենների Խորհուրդը

6.36. Տնօրենների Խորհուրդը Կազմակերպության մշտական գործող ղեկավար մարմինն է: Տնօրենների Խորհրդի անդամները վեցն են, որոնցից երեքին առաջադրում է Հասարակական Պալատը, երեքին էլ՝ Վերին Պալատը: Տնօրենների Խորհրդի անդամներն ընտրվում են երկու տարի ժամկետով: Խորհուրդը ղեկավարում է Գործադիր Տնօրենը: Տնօրենների Խորհրդի իրավասությունները պահպանվում են մինչ Տնօրենների Խորհրդի նոր կազմի ընտրվելը:

6.37. Տնօրենների Խորհրդի նիստերը գումարվում և անց են կացվում Կազմակերպության Գործադիր Տնօրենի կողմից ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ:

6.38. Կազմակերպության Տնօրենների Խորհրդի իրավասությունները՝

6.38.1. իրականացնում է Համագումարի որոշումները, ապահովում է Կազմակերպության կազմակերպչական ընդհանրացումը և ամբողջականությունը.

6.38.2. իրականացնում է Կազմակերպության Համագումարի ընդհանուր հրահանգները Համագումարների միջև ընկած ժամանակահատվածում.

6.38.3. գումարում է հերթական և արտահերթ Համագումարներ, որոշում է նրանց անցկացման ժամանակը և վայրը, տեղեկացնում է Համագումարի գումարման մասին.

6.38.4. սահմանում է Կազմակերպության Համագումարի պատվիրակների քվոտան՝ ըստ Կազմակերպության անդամների թվի, Համագումարի գումարման օրվանից առնվազն երեսուն օր առաջ կազմակերպում է Կազմակերպության Համագումարի պատվիրակների ընտրությունը.

6.38.5. կազմում և մշակում է Կազմակերպության բյուջեն, Կազմակերպության ծախսերի և եկամուտների նախահաշիվները, ընդունում է Կազմակերպության ընթացիկ նախագծերը և ծրագրերը, կազմակերպում է դրանց իրագործումը.

6.38.6. քննարկում է Կազմակերպության անդամների կողմից առաջարկված բիզնես-նախագծերը, կազմակերպում է դրանց փորձագիտական քննության և դրանց հիման վրա բիզնես-ծրագիր կազմելու հետ կապված աշխատանքները, ինչպես նաև այդ բիզնես-ծրագրերի իրագործումը.

6.38.7. իրականացնում է Կազմակերպության Գործադիր Տնօրենի կողմից՝ առանձնացված ստորաբաժանումներ՝ ներկայացուցչություններ և մասնաճյուղեր, ինչպես նաև հանձնաժողովներ, բաժիններ, ակումբներ, աշխատանքային խմբեր ստեղծելու և լուծարելու մասին ընդունած որոշումները, հաստատում է դրանց կանոնադրությունները, կանոնակարգերը և աշխատակարգերը, որոնք չեն կարող հակասել սույն Կանոնադրությանը.

6.38.8. իրականացնում է Հասարակական Պալատի՝ տնտեսական ընկերություններ ստեղծելու վերաբերյալ ընդունած որոշումները.

6.38.9. իրականացնում է Գործադիր Տնօրենի կողմից՝ ոչ առևտրային իրավաբանական անձանց միություններ հիմնադրելու և այդ միություններին, ինչպես նաև միջազգային կազմակերպություններին Կազմակերպության անդամակցելու վերաբերյալ ընդունած որոշումները.

6.38.10. իրականացնում է Գործադիր Տնօրենի կողմից՝ օտարերկրյա պետությունների տարածքներում Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների բացման, ինչպես նաև դրանց կազմավորման ձևի և իրավաբանական կարգավիճակի վերաբերյալ ընդունած որոշումները.

6.38.11. իրագործում է Գործադիր Տնօրենի կողմից՝ լրատվական միջոցներ ստեղծելու վերաբերյալ ընդունած որոշումները.

6.38.12. իրագործում է Գործադիր Տնօրենի կողմից՝ հիմնադրամներ ստեղծելու վերաբերյալ ընդունած որոշումները.

6.38.13. Համագումարի քննարկմանը ներկայացնելու համար նախապատրաստում է առաջարկություններ՝ Կազմակերպության Կանոնադրությունում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին.

6.38.14. Վերին և Հասարակական պալատների քննարկմանը ներկայացնելու համար նախապատրաստում է առաջարկություններ՝ Կազմակերպության Կանոնակարգում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին.

6.38.15. պարբերաբար վերլուծության է ենթարկում Կազմակերպության աշխատանքը և ստացված տեղեկատվությունը ներկայացնում է Հասարակական ու Վերին Պալատներին և Կազմակերպության Նախագահին.

6.38.16. որոշում է կայացնում Մոդերատորի կողմից Հասարակական Պալատի նոր անդամին գրանցելու մասին.

6.38.17. իրականացնում է Կազմակերպության Համագումարի բացառիկ իրավասությունների մեջ չմտնող այլ լիազորություններ:

6.39. Տնօրենների Խորհրդի նիստը իրավազոր է որոշումների ընդունման համար, եթե դրան մասնակցում են Խորհրդի անդամների կազմի կեսից ավելին: Տնօրենների Խորհուրդը որոշումներն ընդունում է քվորումի առկայության պայմաններում ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկության ձևը սահմանվում է Տնօրենների Խորհրդի կողմից: Գործադիր Տնօրենի մասնակցությունը նիստին պարտադիր է: Վերջինիս բացակայությամբ Տնօրենների Խորհրդի կողմից ընդունված որոշումներն անվավեր են:

6.40. Տնօրենների Խորհուրդն իր հերթական նիստերը հրավիրում է ըստ անհրաժեշտության, սակայն ոչ ուշ, քան եռամսյակը մեկ անգամ: Կարող են հրավիրվել Տնօրենների Խորհրդի ընդլայնված նիստեր՝ Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների, ինչպես նաև այլ անդամների մասնակցությամբ:

6.41. Տնօրենների Խորհրդի նիստերն արձանագրվում են, ինչը ստորագրվում է Ասոցիացիայի Գործադիր Տնօրենի և արձանագրությունը կազմող անձի կողմից:

6.42. Տնօրենների Խորհուրդը տարին մեկ անգամ հաշվետու է Ասոցիացիայի Նախագահին, Վերին և Հասարակական պալատներին, Վերահսկիչ Հանձնաժողովին:

Կազմակերպության Գործադիր Տնօրենի Աշխատակազմը

6.43. Կազմակերպության Գործադիր Տնօրենի Աշխատակազմը գործում է այն դրույթների հիման վրա, որոնք հաստատվում են Գործադիր Տնօրենի կողմից:

6.44. Գործադիր Տնօրենի Աշխատակազմն իրականացնում է Կազմակերպության ղեկավար մարմինների որոշումները և լուծում է Կազմակերպության տնտեսական և կազմակերպչական գործունեության հետ կապված հարցերը՝

6.44.1. Տնօրենների Խորհրդի հանձնարարությամբ մշակում է բյուջեի նախագծերը, Կազմակերպության եկամուտների և ծախսերի նախահաշիվները և դրանք ներկայացնում Տնօրենների Խորհրդի հաստատմանը.

6.44.2. իրականացնում է Կազմակերպության անդամագրումը և Կազմակերպության անդամակցության դադարեցումը, վարում է Կազմակերպության անդամների կենտրոնացված հաշվառում.

6.44.3. տնօրինում է Կազմակերպության արխիվը.

6.44.4. զբաղվում է Կազմակերպության Համագումարների և Տնօրենների Խորհրդի նիստերի արձանագրմամբ.

6.44.5. կատարում է Կազմակերպության Նախագահի և Գործադիր Տնօրենի կողմից իր վրա դրված առանձին լիազորություններ.

6.44.6. իրականացնում է Կազմակերպության գործունեությունը համակարգող այլ կազմակերպչական գործառույթներ:

Կազմակերպության Վերահսկիչ Հանձնաժողովը

6.45. Կազմակերպության Վերահսկիչ Հանձնաժողովը հանդիսանում է Կազմակերպության գլխավոր վերահսկողական մարմինը: Հանձնաժողովն ընտրվում է Համագումարի կողմից երկու տարի ժամկետով և իր գործունեությունն իրականացնում է սույն Կանոնադրության դրույթների հիման վրա:

6.46. Վերահսկիչ Հանձնաժողովն իրականացնում է Կազմակերպության ֆինանսական և տնտեսական գործունեության վերահսկողություն:

6.47. Կազմակերպության Վերահսկիչ Հանձնաժողովն ունի 5 անդամ, որոնց ընտրում է Կազմակերպության Համագումարը 2 տարի ժամկետով: Նրանցից մեկին Համագումարն ընտրում է որպես Վերահսկիչ Հանձնաժողովի Նախագահ: Վերահսկիչ Հանձնաժողովի Նախագահը իրականացնում է Համագումարի ընդհանուր հրահանգները և բաշխում է պարտականությունները նրա անդամների միջև:

6.48. Կազմակերպության ֆինանսա-տնտեսական գործունեության հերթական ստուգումներն իրականացվում են Վերահսկիչ Հանձնաժողովի կողմից տարին մեկ անգամ:

6.49. Կազմակերպության ֆինանսա-տնտեսական գործունեության արտահերթ ստուգումները կարող են իրականացվել Վերահսկիչ Հանձնաժողովի որոշմամբ, Կազմակերպության Նախագահի կամ Հասարակական Պալատի անդամների 2/3-ի հիմնավորված պահանջով:

6.50. Վերահսկիչ Հանձնաժողովի աշխատանքի կարգը սահմանվում է Կազմակերպության Համագումարի կողմից հաստատված դրույթներով:

6.51. Վերահսկիչ Հանձնաժողովն իր իրավասության սահմաններում ընդունում է որոշումներ Հանձնաժողովի նիստերի միջոցով: Նիստն իրավազոր է, եթե մասնակցում են Հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են նրա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Վերահսկիչ Հանձնաժողովի Նախագահի մասնակցությունը նիստերին պարտադիր է:

6.52. Վերահսկիչ Հանձնաժողովը հաշվետու է Կազմակերպության Համագումարին՝ երկու տարին մեկ անգամ:

6.53. Վերահսկիչ Հանձնաժողովն իրավունք ունի պահանջել Կազմակերպության արտահերթ Համագումարի գումարում:

6.54. Ասոցիացիայի ղեկավար մարմինների անդամները չեն կարող Վերահսկիչ Հանձնաժողովի անդամներ լինել:

6.55. Կազմակերպության և բաժանմունքների բոլոր ընտրված ղեկավար և գլխավոր մարմինների անդամների լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել սույն Կանոնադրությունը խախտելու, ղեկավար մարմինների որոշումները պարբերաբար չկատարելու, Կազմակերպությանը նյութական և բարոյական վնաս պատճառելու, ինչպես նաև Կազմակերպության անդամության կորստի դեպքում (Կազմակերպությունից դուրս գալը կամ անդամակցությունը դադարեցնելը):

Գլուխ 7. Կազմակերպության կազմակերպչական կառուցվածքը

7.1 Կազմակերպությունն ըստ գործող օրենսդրության իրավունք ունի ստեղծել մասնաճյուղեր, ներկայացուցչություններ և բաժանմունքներ, որոնք գործում են Հայաստանի Հանրապետության տարածքում և աշխարհի այլ երկրներում:

7.2. Ներկայացուցչությունը Կազմակերպության գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումն է, որը ներկայացնում է Կազմակերպության շահերը և իրականացնում դրանց պաշտպանությունը:

7.3. Մասնաճյուղը Կազմակերպության գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումն է, որն իրականացնում է նրա բոլոր գործառույթները կամ դրանց մի մասը՝ ներառյալ ներկայացուցչության գործառույթները:

7.4. Բաժանմունքը կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ •որխունեություն իրականացնելու համար Կազմակերպության ստեղծած ստորաբաժանում է:

7.5. Ներկայացուցչությունները, մասնաճյուղերն ու բաժանմունքները իրավաբանական անձինք չեն և գործում են Կազմակերպության Կանոնադրության դրույթների հիման վրա:

7.6. Ներկայացուցչությունների, մասնաճյուղերի և բաժանմունքների գույքը տրամադրվում է Կազմակերպության կողմից և հաշվառվում է ինչպես նրանց առանձին հաշվեկշիռներում, այնպես էլ Կազմակերպության հաշվեկշռում և համարվում է Կազմակերպության սեփականությունը:

7.7. Ներկայացուցչությունների, մասնաճյուղերի և բաժանմունքների ղեկավարները նշանակվում են Կազմակերպության Գործադիր Տնօրենի կողմից և գործում են նրա տված լիազորագրի հիման վրա:

7.8. Ներկայացուցչությունների, մասնաճյուղերի և բաժանմունքների համար գույքային պատասխանատվություն է կրում Կազմակերպությունը:

7.9. Կազմակերպության Տնօրենների Խորհրդի որոշմամբ նրա բաժանմունքները կարող են օրենքով սահմանված կարգով ձեռք բերել իրավաբանական անձի կարգավիճակ:

Գլուխ 8. Կազմակերպության սեփականությունը, գույքի ձևավորման աղբյուրները և օգտագործման կարգը

8.1. Կազմակերպությունը՝ գործող օրենսդրությանը համապատասխան, կարող է ունենալ սեփականություն՝

8.1.1. որպես սեփականություն՝ Կազմակերպությունը կարող է ունենալ հողամասեր, շենքեր, շինություններ, կառույցներ, բնակարանային ֆոնդ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, գույք (ինվերտար), մշակութա-լուսավորչական և առողջարարական նշանակության գույք, դրամական միջոցներ, արժեթղթեր, այլ արժեքավոր թղթեր և այլ գույք, որոնք անհրաժեշտ են Կազմակերպության կանոնադրական գործունեությունը ապահովելու համար.

8.1.2. հաստատությունները, կազմակերպությունները, հրատարակչությունները, զանգվածային լրատվական միջոցները ստեղծվում կամ ձեռք են բերվում Կազմակերպության միջոցների հաշվին՝ նրա կանոնադրական նպատակներին համապատասխան:

8.2. Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուրները

Կազմակերպության գույքը և միջոցները ձևավորվում են ի հաշիվ՝

8.2.1. մուտքավճարների և անդամավճարների.

8.2.2. տնտեսական ընկերությունների, տեղական, օտրերկրյա և միջազգային կազմակերպությունների, անհատ քաղաքացիների կողմից ստացվող նվիրատվությունների, դրամաշնորհների և դոտացիաների.

8.2.3. օրենքով թույլատրված ցանկացած՝ ներառյալ զվարճալի, մշակութային, սպորտային և այլ զանգվածային միջոցառումներից ստացվող ռեսուրսների ներգրավումից, արշավների անցկացման, բարեգործական նվիրատվությունների հավաքման համար՝ ցուցահանդեսների, աճուրդների, վիճակախաղերի անցկացման արդյունքում ստացված միջոցների.

8.2.4. օրենսդրությամբ թույլատրված եկամուտների այլ աղբյուրներից:

8.3. Կազմակերպությունը հանդիսանում է սեփականության իրավուքի ինքնուրույն սուբյեկտ:

8.4. Կազմակերպությանը պատկանող ամբողջ գույքի սեփականատերն ինքը Կազմակերպությունն է:

8.5. Կազմակերպության անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում է Կազմակերպության Տնօրենների Խորհուրդը՝ Գործադիր Տնօրենի ղեկավարությամբ:

8.6. Կազմակերպության գույքը չի կարող բախշվել նրա հիմնադիրներին և անդամներին:

8.7. Կազմակերպության ղեկավար մարմիններում ընդգրկված անձինք Կազմակերպության կողմից կարող են վարձատրվել՝ Կազմակերպության Գործադիր Տնօրենի կողմից սահմանված կարգով:

Գլուխ 9. Կազմակերպության Կանոնադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու կարգը

9.1. Կազմակերպության Կանոնադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկը Համագումարին ներկայացվում է Տնօրենների Խորհրդի կողմից: Փոփոխությունները և լրացումները Համագումարի կողմից ընդունված են համարվում, եթե ապահովված է քվորումը և առաջարկին կողմ է քվեարակել ներկա պատվիրակների 2/3-ը և ավելին:

9.2. Կազմակերպության Կանոնադրությունում փոփոխությունները և լրացումները ենթակա են պետական գրանցման՝ օրենքով նախատեսված կարգով, և երրորդ անձանց համար ուժի մեջ են մտնում՝ սկսած պետական գրանցման պահից:

Գլուխ 10. Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը

10.1. Կազմակերպության վերակազմակերպումը (միաձուլում, միացում, բաժանում, առանձնացում, վերակազմավորում) և լուծարումը կարող է իրականացվել Կազմակերպության Համագումարի որոշմամբ:

10.2. Կազմակերպության հարկադիր վերակազմակերպումը կամ լուծարումը կարող է կատարվել միայն դատական կարգով՝ դատարանի որոշմամբ:

10.3. Կազմակերպության վերակազմակերպման և լուծարման մասին որոշումը ընդունվում է Կազմակերպության Համագումարի կողմից՝ Համագումարի պատվիրակների որակյալ մեծամասնության ձայների 2/3-ով:

10.4. Կազմակերպության գործունեությունը համարվում է ավարտված, իսկ Կազմակերպությունը՝ լուծարված, իրավաբանական անձանց ընդհանուր պետական գրանցամատյանում համապատասխան գրառում կատարելու պահից:

10.5. Կազմակերպության գույքը և միջոցները, լուծարված Կազմակերպության Համագումարի որոշմամբ Կազմակերպության պարտատերերի պահանջների բավարարումից հետո ուղղորդվում են Կազմակերպության Կանոնադրությամբ նախատեսված նպատակներին:

10.6. Կազմակերպության լուծարումից հետո Կազմակերպության բոլոր փաստաթղթերը օրենքով նախատեսված կարգով տրվում են պահպանման պետական արխիվին:

10.7. Կազմակերպության լուծարման մասին որոշումն ուղարկվում է Կազմակերպության պետական գրանցումն իրականացրած մարմին՝ իրավաբանական անձանց ընդհանուր պետական գրանցամատյանից հանելու համար: